

ՆԱՅԵՐՆ ԱՅՍՕՐ

107

ՀՀ ՍՓՅՈՒՌԷԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ

Քաղաքականություն

Արգենտինայի դատարանի դատավճիռը. Թուրքիան մեղավոր է Հայոց ցեղասպանություն գործելու մեջ

Հայազգի Պեդրո Մուրադյանը նշանակվել է Արգենտինայի խտրականության դեմ պայքարի գծով քարտուղարի տեղակալ

Հովիկ Աբրահամյանը Շվեյցարիա այցելության ժամանակ զգացել է հայ համայնքի նկատմամբ լավ վերաբերմունք

Ֆրանսիայի ԱԾ պատգամավոր Ռոնե Ռուբեն կոչ է անում իր երկրին հարգել ԼՂՀ ինքնորոշման իրավունքը

Ցեղասպանության 100-ամյակին ընդառաջ Հայաստանը պետք է պաշտոնապես բարձրացնի սառեցված Հայկական հարցը

Բակո Սահակյանը կարևորել է Արցախի երիտասարդների կապը Հայաստանի և Սփյուռքի հետ Շվեյցարիայի նախագահը Երևանում հարգել է Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը

Մինգաչաուրի ԱԳՆ ղեկավար Ջորջ Յեոն պատրաստ հնարավորինս աջակցելու հայ-սինգաչաուրյան կապերի ակտիվացմանը

Սեդրակ Աճեմյան. Ղարաբաղյան պատերազմի վերսկսումն անկանխատեսելի հետևանքներ կբերի տարածաշրջանի համար

ՀՀ սփյուռքի նախարարություն

ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը հանդիպեց ավստրալիացի գործարարների հետ

Ավստրալիայի խորհրդարանականների հետ հանդիպմանը ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը բարձրացրել է Հայոց ցեղասպանության ճանաչման և Լեռնային Ղարաբաղի անկախության հարցերը

ԲԱԹՈՒՄԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՆ ՈՒ ՆՐԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՀՀ սփյուռքի նախարարությունում անցկացվեց Եվրամիության Թվինինգ և Թայբես ծրագրերին նվիրված սեմինար

Հրանուշ Հակոբյանը մասնակցել է Մինգաչաուրի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Հայ Առաքելական եկեղեցու 175-ամյակի միջոցառումներին

Մինգաչաուրի ԱԳՆ ղեկավարը հայերի փոքր համայնքը համարում է «երկրի թագի գարդերից մեկը»

ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը մասնակցեց Մինգաչաուրի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու և հայ համայնքի հիմնադրման 175-ամյակին նվիրված տոնակատարություններին

Սփյուռք

Մարիա Մեհրանյանը նշանակվել է Կալիֆորնիայի Ցեղասպանության գծով միջազգային հանձնաժողովի անդամ

Մոնտեբելոյի ավտոմայրուղում տեղադրվել է ճանապարհային նշան, որն ուղղորդում է դեպի Հայոց ցեղասպանության հուշարձան

Համազգայինը Գումարել է Երջանային Ժողով Եւ Ընտրել Նոր Ղեկավար Կազմ

Լիբանանում տեղի կունենան միջոցառումներ՝ նվիրված Այնթապի հերոսամարտի 91-ամյակին «Ազգ». ԱՄՆ-ում սկսվել է Ցեղասպանության ճանաչման արշավը

ՎԻԳԵՆ ԶԱԼԴՐԱՆԵԱՆ ԳԵՐՄԱՆԻՈՅ ՄԷՋ

Ժնեի բաստիոնը կլուսավորեն Հայոց ցեղասպանության գոհերին նվիրված «Հիշողության լապտերները»

Սփյուռքում գործող հայկական դպրոցի տնօրեն, որին պետք է ճանաչել

Էթնիկ հայ Դարոն Աճեմօղլուի նշանակումը Ֆրանսիայում Թուրքիայի դեսպան Էրդողանի PR-բարոզարշավի մի մասն է

Ամերիկացի կոնգրեսական Ադամ Շիֆի ընտրատարածքում «Տարվա կին» տիտղոսը շնորհվել է Մարո Քեշիշյանին

Հայագի Աջեմօղլուն հրաժարվել է Փարիզում Թուրքիայի դեսպանի պաշտոնից՝ պատճառաբանելով ցիտական աշխատանքը

ԱՆԱԼՑԽԱՅՈՒՄ ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ՎԱՀՐԱՄ ԳԱՅՖԵՃՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՍՏԵՂՍԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

2012 թվականին Պերմի երկրամասում կավարտվի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու կառուցումը

Սանկտ Պետերբուրգի հայ համայնքը «Միսս հայկական մարզարիտ» մրցույթում կրնտրի ամենագեղեցիկ հայուհուն

Պիեռ Ֆատտուշը միաձայն ընտրվել է Լիբանան-Հայաստան բարեկամական ստեղծագիտական նախագահ

Սինգապուրի հայ համայնքը մեծ ջուրով նշել է երկրի ամենահին քրիստոնեական եկեղեցու 175-ամյակը

Իրավիճակը Դամասկոսում հանգիստ է, սիրիահայ համայնքում հավաստիացնում են, որ իրենց ոչինչ չի սպառնում

Հայկական Բարեկենդանը՝ Դանիայի հայ համայնքում

Հասարակություն

Վերջին երեք տարում Արցախ է տեղափոխվել 440 քնտանիք, որոնցից 130-ը՝ միայն անցյալ տարի Ստամբուլի դատարանը մերժել է Դինքի ընտանիքի փաստաբանների՝ Օգյուն Սամաստի հորը նիստին կանչելու պահանջը

Վրաստանի հայկական դպրոցներում կվերականգնվի հայոց լեզվի դասաժամերի նախկին ծավալը
ՀԲԸՄ Հայկական վիրտուալ համալսարանը հայտարարում է 2011թ.-ի գարնանային ուսումնական շրջանի գրանցման ժամանակաշրջանը

Արցախյան ազատամարտի հերոս Դմիտրի Մուրիչը ՀՀ նախագահի անունից հետմահու պարգևատրվել է «Արիության» մեդալով

Օրհան Փամուրը Հայոց ցեղասպանության մասին իր խոսքերի համար պետք է վճարի 4000 դոլար

Մշակույթ

Նիդերլանդներում տեղի կունենա Ցեղասպանության 96-ամյակին նվիրված ոգեկոչման համերգ
Հրաչ Թիթիգյանը Բրոդվեյում խաղում է Ուոլեյ Հուսեինի ուրվականի դերը, որը հայտնվում է գինվորին՝ Ռորին Ուիլյամսին

PBS-ի եթերում Ֆլորիդայում ցուցադրվելու է «Հայոց ցեղասպանություն» փաստագրական ֆիլմը

Կայքի տառատեսակի ճիշտ արտաբերման համար օգտագործեք Arian AMU.ttf Հայոց ցեղասպանության գոհերի հիշատակին նվիրված համերգին կմասնակցեն պապ և թոռ
Գասաբարյանները 01.04.11 21:42 Ապրիլի 29-ին Մոսկվայում Կրեմլի

Լայգա Մինելին, Էլթոն Ջոնը, Մելին Դիոնը իրենց ներկայությամբ կպատվեն Ազնավուրին նվիրված միջոցառումը

Արթուր Աբրահամը Boom-Boom երգի տեսահոլովակի գլխավոր հերոսն է, որը Էմմիի կատարմամբ կինչի Եվրատեսիլում

Ռուս ընթերցողի դատին կներկայացվի «Գրիգոր Նարեկացին և Միջնադարի հոգևոր մշակույթը» գիրքը

Դերասան Օնիկ Կեղոյանը մասնակցում է Աթենքի գլխավոր ներկայացումներից մեկում

Սպորտ

Ռոման Անոյանը Եվրոպայի հունա-հռոմեական ըմբռանարտի չեմպիոն է դարձել

Մարտի 25-ին Սյունիք մեկնեց Սփյուռքահայ Ուսանողների Խորհրդի վոլեյբոլի ջոկատը

Հայտարարություններ

ՀՐԱՎԻՐՈՒՄ ԵՆՔ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ «ՎԵՐԱԾՆՈՒՆՂ» ԵՐԱԺԻՇՏ-ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹ-ՓԱՌԱՏՈՒՆ

Քաղաքականություն



Արգենտինայի դատարանի դատավճիռը. Թուրքիան մեղավոր է Հայոց ցեղասպանություն գործելու մեջ

2011-04-02

Ինչպես գրում է The Washington Post թերթը, դատավճռում ասվում է, որ Թուրքիան պարտավոր է օգնել Ցեղասպանության գոհերի Արգենտինայում բնակվող ժառանգներին տեղեկություններ ստանալ մոտ 50 հազար հարազատների մասին, որոնք անհայտ կորել են Ցեղասպանության տարիներին: Սակայն, տվյալ որոշումը գուտ հայտարարության բնույթ է կրում:

Թուրքիայի դեսպանատունը Բուենոս Այրեսում դեռ չի մեկնաբանել արգենտինական դատարանի որոշումը:



Հայազգի Պեդրո Մուրադյանը նշանակվել է Արգենտինայի խտրականության դեմ պայքարի գծով քարտուղարի տեղակալ

2011-04-02

Ինչպես գրում է Բուենոս Այրեսի հայկական «Արմենիա» թերթը, ապրիլի 1-ին, ներկայացնելով նոր փոխքարտուղարին, Արգենտինայի արդարադատության նախարար Խոսե Մարտին Ալակը հայտարարել է, որ Մուրադյանի նշանակումն այդ պաշտոնում կնպաստի արգենտինական

օրենսդրության կատարելագործմանը խտրականության և ռասիզմի դեմ պայքարի հարցերում: Իր հերթին Պեդրո Մուրադյանը պատրաստակամություն հայտնեց շարունակել աշխատանքն այդ ուղղությամբ:



Հովիկ Աբրահամյանը Շվեյցարիա այցելության ժամանակ զգացել է հայ համայնքի նկատմամբ լավ վերաբերմունք

2011-04-01

Ողջունելով հյուրին՝ ԱԺ նախագահը կարեւորեց նրա այցը երկու երկրների միջեւ հարաբերություններն ամրապնդելու եւ զարգացնելու առումով: ԱԺ նախագահը նշեց, որ Շվեյցարիա կատարած իր պաշտոնական այցի ժամանակ զգացել է, թե ինչքան լավ են

տրամադրված Շվեյցարիայի իշխանությունները հայկական համայնքի եւ ընհանրապես հայ ժողովրդի նկատմամբ:

Շվեյցարիայի Համադաշնության նախագահը շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար՝ նշեց, որ վերջին տարիներին երկու երկրների միջեւ հարաբերությունները բավականին սերտացել են, ինչի վկայությունն են նաեւ բարձր մակարդակով տարբեր փոխայցելությունները, ինչպես նաեւ Հայաստանում Շվեյցարիայի դեսպանատան բացումը:

Նրա խոսքերով՝ Երեւանում դեսպանատուն բացելը վկայում է Հայաստանի հետ հարաբերություններն ամրապնդելու՝ Շվեյցարիայի ցանկության մասին: Շվեյցարիայի Նախագահը նշեց, որ իրենք Հայաստանում իրականացնում են ծրագրեր տարբեր ոլորտներում եւ այսուհետ եւս մտադիր են շարունակել փոխգործակցությունը տարբեր ուղղություններով:

Հայաստանի խորհրդարանի ղեկավարը նշեց, որ դեռ կառավարությունում աշխատած տարիներից է ծանոթ Շվեյցարիայի կողմից Հայաստանում իրականացվող ծրագրերին՝ նաեւ համակարգելով դրանք: Հովիկ Աբրահամյանը նշեց, որ Հայաստանը որդեգրել է եվրոպական ընտանիքին ինտեգրվելու քաղաքականություն. ակտիվ քայլեր են կատարվում բարեփոխումների իրականացման, մեր երկրի օրենսդրությունը եվրոպական չափանիշներին համապատասխանեցնելու ուղղությամբ: Աշխատանքներ են իրականացվում եվրոպական կառույցների, այդ թվում՝ Եվրոպական խորհրդարանի հետ:

Միջելին Կավլի-Ռեյը նշեց, որ Շվեյցարիան շնորհակալ է Հայաստանին՝ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացում իրեն միջնորդի դեր վստահելու համար: Նա ասաց, որ Հայաստանի իշխանությունները քաղաքական մեծ համարձակություն դրսեւորեցին՝ նախաձեռնելով եւ ստորագրելով հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանն ուղղված արձանագրությունները: ԱԺ նախագահ Հովիկ

Աբրահամյանը կարևոր համարելով Շվեյցարիայի հետ հարաբերությունների զարգացումը բոլոր ոլորտներում՝ բարձր գնահատեց այդ երկրի ջանքերը հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման ուղղությամբ: Նշելով, որ ՀՀ ԱԺ Հայաստան- Շվեյցարիա պատգամավորական բարեկամության խմբի անդամներն ակտիվորեն համագործակցում են իրենց շվեյցարացի գործընկերների հետ՝ ԱԺ նախագահն ընդգծեց շվեյցարական խորհրդարանի հետ կապերն ակտիվացնելու անհրաժեշտությունը: Հովիկ Աբրահամյանի խոսքով՝ այսօր առավել քան երբևէ կարևոր է խորհրդարանական դիվանագիտության դերը: Շվեյցարիայի Նախագահը համակարծիք էր ՀՀ Ազգային ժողովի նախագահի հետ՝ կարևորելով պատգամավորական բարեկամության խմբերի դերը երկու երկրների միջև հարաբերությունների զարգացման գործում:

Միջեկին Կամիլ-Ռեյը նշեց, որ Շվեյցարիան մեծ կարևորություն է տալիս այս տարածաշրջանին՝ իրականացնելով միջնորդական գործունեություն տարբեր երկրների միջև:

Հանդիպմանն անդադարձ կատարվեց նաև երկկողմ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցերի:

Ֆրանսիայի ԱԺ պատգամավոր Ռինե Ռուրեն կոչ է անում իր երկրին հարգել ԼՂՀ ինքնորոշման իրավունքը

2011-04-01

«Արաբական ժողովուրդների կողմից իրենց ազատության համար մղվող պայքարի շուրջ վերջին շաբաթների իրադարձությունները թույլ են տալիս բազմաթիվ դասեր քաղել: Դա շարժում է՝ հանուն ազատության, որի ճակատագիրը որոշվում է հենց մեր աչքերի առջև, մեզ հիշեցնում է ժողովուրդների ձգտումները հասկանալու և հարգելու անհրաժեշտության մասին, քանի որ ժողովրդավարության ձգտումը համամարդկային արժեք է հանդիսանում աշխարհի բոլոր ծայրերում:

Այս կապակցությամբ, թույլ տվեք հիշեցնել աշխարհի մեկ այլ տարածաշրջանում՝ Լեռնային Ղարաբաղում ապրող հայերի մասին, ոքեր խիզախորեն պայքարում են Ադրբեյջանի դեմ, որը փորձում է բռնի կերպով ճնշել մեզ բարեկամ այս ժողովրդի՝ հարազատ հողում, սեփական Հանրապետության մեջ ազատ ապրելու կամքը: Այսօր՝ անպատիժ մնացած Հայոց ցեղասպանությունից 95 տարի հետո, ավելի քան երբևէ ես վերահաստատում եմ հայերի ինքնորոշման անքակտելի իրավունքը»,- մասնավորապես, նշվում է ֆրանսիացի պատգամավորի հոդվածում:

Նա կոչ է արել իր երկրին և ֆրանսիական դիվանագիտությանը հարգել «տևական խաղաղության ձգտող և դրան հասնելու համար հերոսաբար պայքարող ժողովուրդներին», հայտնում է ԼՂՀ ԱԳՆ մամուլի ծառայությունը:



Ֆեդասպանության 100-ամյակին ընդառաջ Հայաստանը պետք է պաշտոնապես բարձրացնի սառեցված Հայկական հարցը

2011-04-01

Ավելին, ԽՍՀՄ լուծարումից ի վեր գլխավորելով հանցակից ուժերին՝ շրջափակելով մեկուսացնում է Հայաստանի, Արցախի Հանրապետությունները եւ շարունակում է այս պետությունների բնիկ բնակչության դեմ ծրագրած հանցավոր գործողությունները: Այս մասին

ասվում է «Ազատ Հայք» ՀԿ հայտարարության մեջ: Հայտարարության մեջ ասվում է նաև, որ այս իրողություններից ելնելով, ցեղասպանությունը ճանաչած ու դատապարտած երկրներին, պետություններին, հոգևոր ու քաղաքական կառույցներին երախտագիտություն հայտնելով, Հայաստանի քաղաքական վերնախավին հիշեցնում ենք, որ մինչև Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը՝ 2015 թ., մնացել է 1485 օր»:

Ոստի հիմք ընդունելով, որ ի հակակշիռ Թուրքիայի ժխտողական կեցվածքի, Հայոց ցեղասպանությունը ճանաչած ու դատապարտած պետությունները եզրագծել են իրավական եւ քաղաքական փաստաթղթերի ամբողջական մի փաթեթ, որը ՀՀ իշխանությունները պարտավոր են ընդհանրացնել եւ բարձրացնել միջազգային աստիճաններում, «Ազատ Հայք» կոչ է անում. Հայոց Մեծ ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ օրերի հետհաշվարկ սկսել, ԱԺ օրակարգ մտցնել Հայոց ցեղասպանության հետեւանքների վերացմանն ուղղված հայեցակարգի ընդունումը : Առաջարկվում է նաև միջպետական խորհրդակցություններ սկսել Հայոց ցեղասպանությունը ճանաչած երկրների իշխանությունների հետ, մինչև սույն թվականի օգոստոսի 10– ր միջազգային աստիճաններում պաշտոնապես բարձրացնել սառեցված Հայկական հարցը:



Բակո Սահակյանը կարևորել է Արցախի երիտասարդների կապը Հայաստանի և Սփյուռքի հետ

2011-03-31

Հանդիպման ընթացքում քննարկվել է երիտասարդական կազմակերպությունների գործունեությանը եւ երիտասարդների կյանքին վերաբերող հարցերի լայն շրջանակ, հաղորդում է Արցախի նախագահի աշխատակազմի տեղեկատվության գլխավոր վարչությունը:

Երկրի ղեկավարն ընդգծել է, որ երիտասարդների հետ պարբերական հանդիպումները պայմանավորված են հասարակության եւ պետության զարգացման գործում նրանց դերակատարության շարունակական բարձրացման մեջ շահագրգռվածությամբ:

Այս համատեքստում Նախագահ Սահակյանը նշել է, որ երիտասարդական կազմակերպությունների աշխատանքներին պետք է նոր որակ հաղորդել, ավելի խորացնել ու ընդլայնել փոխգործակցությունը պետական եւ հասարակական հատվածների, Հայաստանի եւ Սփյուռքի երիտասարդական կազմակերպությունների հետ:

Հանդիպմանը ներկա էին մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարար Նարինե Աղաբալյանը, պաշտոնատար այլ անձինք:



Շվեյցարիայի նախագահը Երևանում հարգել է Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը

2011-03-31

Միշլին Քալմի Ռեյը հարգանքի տուրք է մատուցել Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանության զոհերին, ծաղկեպսակ դրել հուշահամալիրի մոտ, ծաղիկներ՝ հավերժական կրակի մոտ: Շվեյցարիայի նախագահը ջրել է եղնին, որը նա տնկել էր 2006-ին Հայաստան կատարած առաջին այցի ընթացքում, երբ նա Շվեյցարիայի ԱԳ նախարար էր: Հայկական կողմից Շվեյցարիայի նախագահին

ուղեկցել են ՀՀ ԱԳՆ ղեկավար Էդվարդ Նալբանդյանը և Երևանի քաղաքապետ Կարեն Կարապետյանը:



Մինգապուրի ԱԳՆ ղեկավար Ջորջ Յեռն պատրաստ հնարավորինս աջակցելու հայ-սինգապուրյան կապերի ակտիվացմանը

2011-03-30

Այցի ընթացքում դեսպան Սարգսյանը հանդիպում է ունեցել Մինգապուրի արտաքին գործերի նախարար Ջորջ Յեռի հետ: Քննարկել են երկկողմ հարաբերություններին, տարբեր մակարդակներում պաշտոնական փոխայցելություններին, գործարար շրջանակների միջոց

համագործակցության հաստատմանն ու հետագա զարգացմանը նվիրված հարցեր:

Հավանություն տալով հայկական կողմի առաջարկներին՝ նախարար Ջորջ Յեռն իր պատրաստակամությունն է հայտնել հնարավորինս աջակցելու հայ-սինգապուրյան կապերի ակտիվացման գործընթացին: Միաժամանակ նա բարձր է գնահատել հայ համայնքի դերը Մինգապուրի տնտեսական, հասարակական եւ մշակութային կյանքում:

Դեսպանի հրավերով Մինգապուրի արտաքին գործերի նախարարը մարտի 27-ին ներկա է գտնվել Մբ. Գրիգոր Լուսավորիչ էկեղեցում մատուցված սուրբ պատարագին եւ մասնակցել է դրան հաջորդած միջոցառմանը, ուր հանդես է եկել ողջույնի խոսքով:

Եկեղեցու օժան 175 ամյակին նվիրված միջոցառումներին մասնակցել են ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը, Մբ. Էջմիածնի հատուկ ներկայացուցիչ Ոսկան արքեպիսկոպոս Կալպակյանը, Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի Հայոց թեմի առաջնորդ Աղան արքեպիսկոպոս Պալիոզյանը: Ներկա էին աշխարհի 14 երկրներից ժամանած ավելի քան 160 հայեր, ինչպես նաև Մինգապուրում գործող այլ եկեղեցիների հոգևորականներ, երկրի հասարակայնության ներկայացուցիչներ, հաղորդում է ՀՀ ԱԳՆ մամուլ ծառայությունը:



Մեղրակ Աճեմյան. Ղարաբաղյան պատերազմի վերսկսումն անկանխատեսելի հետևանքներ կրերի տարածաշրջանի համար

2011-03-28

Խորհրդաժողովին մասնակցում էին բազմաթիվ հեղինակավոր քաղաքական և հասարակական գործիչներ Ֆրանսիայից, Հայաստանից, ԱՄՆ-ից, Գերմանիայից և այլն:

Իբրև հիմնական զեկուցող հանդես եկավ Սոցիալ Դեմոկրատ Հնչակյան կուսակցության Կեդրոնական վարչության անդամ Վահան Շիրխանյանը, ով անդրադարձավ Հարավային Կովկասի ռազմականացմանը, հայ-ադրբեջանական և հայ-թուրքական հարաբերություններին, Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրին, ֆրանսիացի խորհրդարանականների ուշադրությունը հրավիրեց Բաքվի կողմից պարբերաբար հնչող պատերազմի մասին սպառնալիքներին, ընդգծեց այն ապակառուցողական և վտանգավոր դիրքորոշումը, որ որդեգրել է Թուրքիան Հայաստանի հետ հարաբերություններում և Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրում: Խորհրդաժողովի փակման խոսքով հանդես եկավ ՄԴՀԿ Կեդրոնական Վարչության ատենապետ Մեղրակ Աճեմյանը:

«Խաղաղությունը, անվտանգությունն ու կայունությունը Հարավային Կովկասում լույս բառեր չեն, այն գերակա խնդիր է ոչ միայն տարածաշրջանի, այլև ողջ միջազգային հանրության համար»,- նշել է Աճեմյանը: Իր խոսքում Աճեմյանն անդրադարձել է Թուրքիայի հակահայ քաղաքականությանը, որը ձգտում է մտնել Եվրամիություն, սակայն փակ է պահում Հայաստանի հետ սահմանը, փորձելով երկիրը պահել շրջափակման մեջ՝ այս կերպ մշտական վտանգ ներկայացնելով տարածաշրջանի համար: «Թուրքիան շարունակում է ժխտել անցյալ դարի մեծագույն ոճիրը՝ Հայոց ցեղասպանությունը, որին զոհ գնացին մեկ և կես միլիոն մեր հայրենակիցները»,- ընդգծել է ատենապետը:

Խոսելով Ադրբեջանի մասին՝ նա նշել է, որ անցած դարի 90-ական թ-ից նա ռազմական ագրեսիա սկսեց միջազգային իրավունքի բոլոր տարրերին համապատասխան ինքնորոշված Լեռնային Ղարաբաղի ժողովրդի դեմ, և պարտվեց իր սանձազերծած պատերազմում: «Այժմ էլ, երբ Ղարաբաղում մեծացել է նոր՝ անկախ սերունդ, Ադրբեջանը մշտապես սպառնում է պատերազմով, որի սկսումը անկանխատեսելի հետևանքներ կրերի ոչ միայն իր՝ այլև ողջ տարածաշրջանի համար»,- հայտարարել է Աճեմյանը:

ՀՀ սփյուռքի նախարարություն



ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը հանդիպեց ավստրալիացի գործարարների հետ

2011-04-03

Հանդիպումը կազմակերպել էր «Հայկորպ» սեփականատիրության զարգացման ընկերությունը, որի գործադիր տնօրեն Մայքլ Աբուլաքյանը հյուրըկալեց նախարար Հրանուշ Հակոբյանին:

Ավստրալիացի գործարարներից բացի ՀՀ սփյուռքի նախարարի հետ հանդիպմանը ներկա էին նաև հայաշատ Ռայդ քաղաքի քաղաքապետ Արթին Էքմեքճյանը՝ տիկնոջ հետ, Ռայդի քաղաքային խորհրդի անդամ Մարգիտ Յեղեյանը, ավստրալիացի առևտրատնտեսական պալատի նախագահ Ռիտա Լեփեճյանը, «Փլանետ Արք» («Planet Ark») և «Դու Մամֆինգ» («Do Something») հասարակական կազմակերպությունների հիմնադիր և հայ ժողովրդի բարեկամ Ջոն Դին: Ողջունելով ներկաներին՝ ՀՀ սփյուռքի նախարար Հ.Հակոբյանը բարձր գնահատեց ավստրալիացի գործարարների դերը Ավստրալիա-Հայաստան տնտեսական կապերի զարգացման գործում: Նախարարն ընդգծեց, որ ՀՀ կառավարությունը Հայաստանի տնտեսական զարգացումը համարում է պետության կայունության երաշխիք: «Մենք ստեղծել ենք բոլոր հնարավորությունները՝ դյուրացնելու օտարերկրյա դրամազվյի ներդրումները Հայաստանում և հրավիրում ենք սփյուռքահայ գործարարներին իրենց ներդրումներով ճանապարհի հարթել և վստահություն ներշնչել օտարերկրյա գործարարներին», - նշեց տիկին Հ.Հակոբյանը:

Հանդիպման ավարտին նախարարը խորհուրդ տվեց ներկաներին այցելել Հայաստան և տեղում քննարկել ներդրումների հնարավորությունները:

«Այսօր առիթ ունեցանք հանդիպելու Հայաստանի կառավարության բարձրաստիճան և ազդեցիկ

նախարարներից մեկին: Մեր անկեղծ քննարկումներից հետո ավելի շատ դրդապատճառներ ունենք Հայաստանում ներդրումներ կատարելու», - նշեց երիտասարդ գործարար և «Հայկորպ» ընկերության տնօրեն Ս.Աբուլաքյանը:



Ավստրալիայի խորհրդարանականների հետ հանդիպմանը ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը բարձրացրել է Հայոց Ցեղասպանության ճանաչման և Լեռնային Ղարաբաղի անկախության հարցերը

2011-04-02

Խորհրդարանականներ Ջո Հոկիի, Փոլ Ֆլեչերի, Գլադիս Բերեջիկյանի և Ջոնաթան Օ Դեայի հետ Ավստրալիայի Հայ Դատի հանձնախմբի կողմից կազմակերպված հանդիպումները ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանին հնարավորություն ընձեռեցին ներկայացնելու Հայոց Ցեղասպանության և Լեռնային Ղարաբաղի անկախության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության դիրքորոշումները:

Ի պատասխան խորհրդարանականների հարցերի, Հ.Հակոբյանը նաև ներկայացրեց ՀՀ սփյուռքի նախարարության գործունեությունն ու նպատակները:

«Հայաստանի Հանրապետության կառավարության արտաքին քաղաքականության ամենակարևոր խնդիրներն են Հայոց Ցեղասպանության միջազգային ճանաչումն ու դատապարտումը, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի՝ որպես անկախ պետության ճանաչման քարոզչությունը», - ասել է նախարար Հրանուշ Հակոբյանը: Ծավալվեցին լայն քննարկումներ՝ Հայոց Ցեղասպանության փաստի և աշխարհով մեկ սփռված հայ ժողովրդի վերաբերյալ:

Նախարարին ուղեկցող Ավստրալիայի Հայ դատի հանձնախմբի գործադիր տնօրեն Վարանդ Մկրտիչյանն ընդգծեց Ավստրալիայի խորհրդարանականների հետ նախարարի հանդիպումների կարևորությունը:

«Քննարկումների ընթացքում նախարարը և Ավստրալիայի Հայ դատի հանձնախմբի ներկայացուցիչներն ընդգծեցին, որ Հայաստանի Հանրապետությունը և Ավստրալիայի հայկական համայնքը միակարծիք են Հայոց ցեղասպանության ճանաչման և Լեռնային Ղարաբաղի անկախության հարցերում: Նախարար Հ.Հակոբյանի խոսքերով այսօր նոր և ավելի խոր հնչեղություն ստացան Ավստրալիայի Հայ դատի հանձնախմբի և Ավստրալիայի խորհրդարանականների կողմից հաճախ բարձրացված հարցերը», - ասել է Վարանդ Մկրտիչյանը:

Նախարար Հ.Հակոբյանին ընդունած խորհրդարանականները միշտ էլ համագործակցել են Ավստրալիայի Հայ դատի հանձնախմբի հետ՝ հայկական համայնքին հուզող հարցերի շուրջ: Տարիներ շարունակ խորհրդարանական Ջ.Հոկիին կողմ է եղել Դաշնային խորհրդարանի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչմանը, իսկ Փ.Ֆլեչերը և Ջ.Օ Դեան իրենց ելույթներում միշտ կողմ են եղել Լեռնային Ղարաբաղի անկախությանը: Վերջերս ընտրված տիկին Բերեջիկյանը եղել է Ավստրալիայի Հայ դատի հանձնախմբի վարչության անդամ:

Նախարար Հ.Հակոբյանի Ավստրալիա այցի նպատակն էր առավել խրախուսել Հայաստանի Հանրապետության և Ավստրալիայի հայկական համայնքի միջև հարաբերությունները: Այս շաբաթ տիկին Հ.Հակոբյանն այցելեց համայնքային կազմակերպություններ, այդ թվում՝ Վիլոուբիի Հայկական մշակութային կենտրոն և Ինգլստոնի Համազգայինի «Գօլստրն» վարժարան:

Հ.Հակոբյանը ներկա է գտնվել նաև համայնքի կողմից կազմակերպված բազմաթիվ հանդիպումների, այդ

թվում նաև ավելի քան 500 մարդկանց մասնակցությամբ մարտի 29-ին Ավստրալիայի Հայկական կենտրոնում տեղի ունեցած շնորհանդեսին:

Ավստրալիայի հայկական համայնքի հասարակայնության հետ կապերի բարձրագույն հանձնաժողով



ԲԱԹՈՒՄԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՆ ՌԻ ՆՐԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2011-04-02

Նա իր հետ բերել էր ՄՆ նախարար Հ. Հակոբյանին ուղղված նամակներ հայ համայնքի ղեկավար Գրիգոր Վարդանյանի և Բաթումի «Մուրբ Փրկիչ» եկեղեցու հոգևոր հովիվ տեր Արարատ Գումբալյանի կողմից: Երկու նամակներում էլ շնորհակալություն էր հայտնվում տիկին Հրանուշ Հակոբյանին նրա գործադրած ջանքերի համար, որի շնորհիվ այժմ Հայաստան-Սփյուռք փոխհարաբերությունը դառնում է ավելի սերտ և կազմակերպված, իսկ իրենք անչափ ոգևորված՝ կրթական, մշակութային և սպորտային բնագավառներում նախարարության կողմից

կատարած ծանրակշիռ աշխատանքների շնորհիվ: Այսօր Բաթումի հայ համայնքը փորձում է հնարավորինս մասնակցել Սփյուռքի Նախարարության ծրագրերին, առավելևս, որ ամեն օր «Արի Տուն» ծրագրին մասնակցած երիտասարդների շուրթերին են Հայաստանից ստացված տպավորությունները:

Զրույցի ժամանակ պարոն Հովհաննիսյանը ներկայացրեց Բաթումի հայ համայնքի կյանքը, խնդիրները: Նա ցավով նշեց, որ Աջարիայում չեն կարողանում դիմագրավել իրենց առջև ծառայած դժվարություններին: Հայկական դպրոցը կորցրել է իր երբեմնի հզորությունը: Հայոց լեզուն, պատմությունը պահպանելու գործը մեծ մասամբ դրված է «Մուրբ Փրկիչ եկեղեցում գործող Մեսրոպ Մաշտոցի անվան կիրակնօրյա դպրոցի ուսերին, որն ունի երկու առաջին և մեկ երկրորդ դասարան: Այս տարի բացվել է ևս մեկ կիրակնօրյա դպրոց Քոբուլեթի քաղաքում: Նյութական պայմանների սղության պատճառով դժվար է հասցնել ուսուցիչների վճարը, իսկ դասագրքերն ու համապատասխան աշխատանքային տետրերը չեն բավականացնում: Կա ևս մեկ ցավալի հանգամանք՝ փակվել է Աջարիայի հայ համայնքի «Աղբյուր» պաշտոնաթերթը:

Պարոն Հովհաննիսյանի հետ կազմվեց անհրաժեշտ դասգրքերի հայտը, որը կներկայացվի ՀՀ ԿԳՆ , քննարկվեց «Աղբյուր» թերթին ֆինանսապես աջակցելու հնարավորության հարցը, որոշվեց ավելի ակտիվ համագործակցել և ամրապնդել կապերը նախարարության հետ՝ ասել է թե Հայրենիքի հետ:

Հասմիկ Եղիազարյան



ՀՀ սփյուռքի նախարարությունում անցկացվեց Եվրամիության Թվինինգ և Թայեքս ծրագրերին նվիրված սեմինար

2011-03-30

Ներկա էին ՀՀ սփյուռքի նախարարության աշխատակազմի վարչությունների և բաժինների պետերը:

ՀՀ էկոնոմիկայի նախարարության Եվրամիության հետ հարաբերությունների Եվրամիության ծրագրերի կառավարման բաժնի աշխատակիցներ Կ.Դանիելյանը, Ա.Հովսեփյանը և Դ.Շինդյանը ՀՀ սփյուռքի նախարարության աշխատակիցներին ներկայացրեցին Թվինինգի սկզբունքները, հիմնական դերակատարներին, ծրագրի ղեկավարներին, Թվինինգի շրջափուլերը, Թվինինգ առաջարկի գնահատման չափորոշիչները, Թայեքս ծրագրի խնդիրները, շահառուներին, Թայեքս օժանդակության տեսակները և այլն:

Սեմինարին ներկա էր նաև ՍՍՏՏՕ (SATTO-Support to Armenian TWINNING and TAIEX Operations) թիմի ղեկավար Պատրիկ Մուսիե Լումպրեն:



Հրանուշ Հակոբյանը մասնակցել է Սինգապուրի Մուրբ Գրիգոր Լուսավորիչ Հայ Առաքելական եկեղեցու 175-ամյակի միջոցառումներին

2011-03-29

Մարտի 25-28-ն աշխատանքային այցով Սինգապուրում գտնվող ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը մասնակցեց Սինգապուրում առաջին քրիստոնեական կառույցի՝ Մուրբ Գրիգոր Լուսավորիչ Հայ

Առաքելական եկեղեցու 175-ամյակին նվիրված միջոցառումներին:

Մարտի 26-ի առավոտյան տիկին Հ.Հակոբյանն այցելեց Սինգապուրում հայկական համայնքի պատմությանն առնչվող տեսարժան վայրեր: Սինգապուրում հայկական համայնքի պատմությունը, եկեղեցուց բացի, ներառում է Հայկական փողոցը, Սինգապուրի պատմական ամենանշանավոր կառույցներից մեկը՝ հանրահայտ Ռաֆլզ Հոթել հյուրանոցը և այն հիմնադրող Մարգիս (Մարգայան) եղբայրների անվամբ կոչվող փողոցը, անգլերենով հրատարակվող Սթրեյթս Թայմզ օրաթերթը (հիմնադրվել է 1845թ. Խաչիկ Մովսեսի կողմից), Սինգապուրի ազգային ծաղիկը (Միս Վանդա Ջոաքիմ, որը կրում է այդ հիբրիդ-խոլորձը ստեղծող հայազգի բուսաբան Աշխեն Հովակիմյանի կամ Ագնես Ջոաքիմի անունը), ինչպես նաև Գալիստան և Սենթ Մարթին փողոցները:

Նույն օրը երեկոյան ՀՀ Սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը մասնակցեց Ռաֆլզ հյուրանոցում կայացած ընդունելությանը, որը եզրափակվեց հայ երաժիշտների կատարմամբ եվրոպական և հայ դասական երաժշտության համերգով: Ներկա էին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ներկայացուցիչ Ոսկան Արքեպիսկոպոս Կալպակյանը, Հայ Առաքելական եկեղեցու Ավստրալիայի թեմի առաջնորդ Ադան Արքեպիսկոպոս Պալիոզյանը, Սինգապուրի Ազգային պատմամշակութային արժեքների պահպանման խորհրդի նախագահ Թոմի Քոհը, Սինգապուրում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Արմեն Մարգայանը, Սինգապուրի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Հայ Առաքելական եկեղեցու հոգաբարձուների խորհրդի անդամներ և այլք: Ընդհանուր առմամբ միջոցառմանը ներկա էր ավելի քան 160 հայ՝ աշխարհի 14 երկրից, այդ թվում՝ շուրջ 40 ներկայացուցիչ՝ Սինգապուրի հայ համայնքից: Երեկոն արձանագրեց Սինգապուրում հայերի թերևս ամենամարդաշատ հավաքը:

Հաջորդ օրը՝ մարտի 27-ին ՀՀ սփյուռքի նախարարը մասնակցեց Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Հայ Առաքելական եկեղեցում մատուցված պատարագին, որին, ի թիվս այլ մասնակիցների, ներկա էր նաև Սինգապուրի արտաքին գործերի նախարար Ջորջ Յոն: Պատարագից հետո հանդիսավոր արարողության մասնակիցներին ողջույնի խոսքով դիմեցին ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը, Սինգապուրում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Արմեն Մարգայանը, ինչպես նաև Սինգապուրի արտաքին գործերի նախարար Ջորջ Յոն: Վերջինս, մասնավորապես, ընդգծեց, որ «հայերի փոքր համայնքը երկրի թագի զարդերից է»:



Սինգապուրի ԱԳՆ ղեկավարը հայերի փոքր համայնքը համարում է «երկրի թագի զարդերից մեկը»

2011-03-29

Սինգապուրում հայկական համայնքի պատմությունը, եկեղեցուց բացի, ներառում է Հայկական փողոցը, Սինգապուրի պատմական ամենանշանավոր կառույցներից մեկը՝ հանրահայտ Ռաֆլզ Հոթել հյուրանոցը և այն հիմնադրող Մարգիս (Մարգայան) եղբայրների անվամբ կոչվող փողոցը, անգլերենով հրատարակվող Սթրեյթս Թայմզ օրաթերթը (հիմնադրվել է 1845թ. Խաչիկ Մովսեսի կողմից), Սինգապուրի ազգային ծաղիկը (Միս Վանդա Ջոաքիմ, որը կրում է այդ հիբրիդ-խոլորձը ստեղծող հայազգի բուսաբան Աշխեն Հովակիմյանի կամ Ագնես Ջոաքիմի անունը), ինչպես նաև Գալիստան և Սենթ Մարթին փողոցները:

Նույն օրը երեկոյան ՀՀ Սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը մասնակցեց Ռաֆլզ հյուրանոցում կայացած ընդունելությանը, որը եզրափակվեց հայ երաժիշտների կատարմամբ եվրոպական և հայ դասական երաժշտության համերգով: Ներկա էին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ներկայացուցիչ Ոսկան Արքեպիսկոպոս Կալպակյանը, Հայ Առաքելական եկեղեցու Ավստրալիայի թեմի առաջնորդ Ադան Արքեպիսկոպոս Պալիոզյանը, Սինգապուրի Ազգային պատմամշակութային արժեքների պահպանման խորհրդի նախագահ Թոմի Քոհը, Սինգապուրում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Արմեն Մարգայանը, Սինգապուրի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Հայ Առաքելական եկեղեցու հոգաբարձուների խորհրդի անդամներ և այլք: Ընդհանուր առմամբ միջոցառմանը ներկա էր ավելի քան 160 հայ՝ աշխարհի 14 երկրից, այդ թվում՝ շուրջ 40 ներկայացուցիչ՝ Սինգապուրի հայ համայնքից: Երեկոն արձանագրեց Սինգապուրում հայերի թերևս ամենամարդաշատ հավաքը:

Հաջորդ օրը՝ մարտի 27-ին ՀՀ սփյուռքի նախարարը մասնակցեց Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Հայ Առաքելական եկեղեցում մատուցված պատարագին, որին, ի թիվս այլ մասնակիցների, ներկա էր նաև Սինգապուրի արտաքին գործերի նախարար Ջորջ Յոն: Պատարագից հետո հանդիսավոր արարողության մասնակիցներին ողջույնի խոսքով դիմեցին ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը, Սինգապուրում ՀՀ արտակարգ և

լիազոր դեսպան Արմեն Սարգսյանը, ինչպես նաև Սինգապուրի արտաքին գործերի նախարար Ջորջ Յոն: Վերջինս, մասնավորապես, ընդգծեց, որ «հայերի փոքր համայնքը երկրի թագի զարդերից է»:



ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը մասնակցեց Սինգապուրի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու և հայ համայնքի հիմնադրման 175-ամյակին նվիրված տոնակատարություններին

2011-03-28

Տոնական միջոցառումներին մասնակցելու նպատակով Սինգապուր էին ժամանել ավելի քան 160 հայ` 14 երկրից:

Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին Սինգապուրի ամենահին քրիստոնեական եկեղեցին է, և 1973թ. հուշարձանների պահպանության Սինգապուրի ազգային խորհրդի կողմից պաշտոնապես ճանաչվել է որպես ազգային կոթող:

ՀՀ սփյուռքի նախարար Հ.Հակոբյանը մասնակցեց Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում մատուցված պատարագին և հանդիսավոր ընդունելությանը: Տիկին Հ.Հակոբյանը շնորհավորելով բոլոր ներկաներին Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հիմնադրման 175-ամյակի և Սինգապուրի հայ համայնքի կազմավորման կապակցությամբ` մեղթեց մեծամեծ նվաճումներ և համահայկական ձեռնարկներին ակտիվորեն մասնակցելու, Հայրենիքի հետ կապերն առավել ամրապնդելու վճռականություն:

Տոնական միջոցառումներին ներկա էր նաև Սինգապուրի արտաքին գործերի նախարարը, ով շնորհավորելով համայնքի և եկեղեցու հիմնադրման առթիվ` նշեց, որ հայկական եկեղեցին և համայնքը կարևոր տեղ է զբաղեցնում սինգապուրյան ժառանգության մեջ:

Սինգապուրում շուրջ 80 հայ է ապրում: Չնայած համայնքը փոքրաթիվ է, սակայն վերջին հինգ տարվա ընթացքում համայնքի անդամների թիվը կրկնապատկվել է, բացվել է հայկական կիրակնօրյա դպրոց:

Իր ելույթում խոստանալով աջակցել հայկական կիրակնօրյա դպրոցի կայացմանը` տիկին Հ.Հակոբյանը Սինգապուրի հայ համայնքին հորդորեց դառնալ ՀՀ սփյուռքի նախարարության կողմից իրականացվող համահայկական և տարածաշրջանային ծրագրերի ակտիվ և շահագրգիռ մասնակիցը, ընդգրկվել Հայրենիք-Սփյուռք գործակցության բոլոր բնագավառներում:

Սփյուռք



Մարիա Մեհրանյանը նշանակվել է Կալիֆորնիայի Ցեղասպանության գծով միջազգային հանձնաժողովի անդամ

2011-04-02

Կոմիտեի նպատակն է միավորել պատմաբանների ու տարբեր մասնագետների Հայոց ցեղասպանության, Հոլոքոսթի, Կամբոջայի ու Դարֆուրի ցեղասպանությունների մասին փաստերի ուսումնասիրության համար:

Մարիա Մեհրանյանը Կալիֆորնիայի հայ համայնքի առանցքային դեմքերից է, որը լուրջ հմտություններ ունի ու ազդեցության ոլորտ: Ինչպես նշում է Asbarez.com-ը, Մեհրանյանը մեծ ավանդ կունենա նորաստեղծ հանձնաժողովի գործունեության մեջ:



Մոնտեռեյի ավտոմայրուղում տեղադրվել է ճանապարհային նշան, որն ուղղորդում է դեպի Հայոց ցեղասպանության հուշարձան

2011-04-02

Ապրիլի 1-ին տեղի է ունեցել ճանապարհային նշանի բացման արարողությունը: Միջոցառմանը ներկա էին Կալիֆորնիայի Վեհաժողովի մեծամասնության առաջնորդ Չարլզ Կալդերոնը, ANCA-ի Մոնթեռեյի բաժանմունքի նախագահ Նազարեթ Սադոբյանը,

հաղորդում է Asbarez.com-ը:

Հայոց ցեղասպանության զոհերին նվիրված հուշարձանը բացվել է 1968թ. ապրիլին ի հիշատակ Հայոց ցեղասպանության նահատակների ու մարդկության դեմ բոլոր հացնագործությունների զոհերի:



Համազգայինը Գումարել Է Շրջանային Ժողով Եւ Ընտրել Լոր Ղեկավար Կազմ

2011-04-02

Օրուան հանդիսավար՝ շրջ. վարչության անդամ Ծովինար Մելքոնեանը, բարի գալուստ մաղթելով ներկաներին՝ շնորհակալություն յայտնեց նրանց, ովքեր ընդառաջելով շրջ. վարչության հրավերին, եկել էին մեկ անգամ եւս զորավիգ կանգնելու եւ վստահեցնելու, թէ բոլորս համագործակցությամբ, ներդաշնակությամբ եւ փոխադարձ հասկացողությամբ կը ծառայենք մեր ազգին՝ այս գաղութին մէջ զարկ տալով ազգային կեանքին, համազգային ճիգերով խանդ ու

աւին ներարկելու Սփյուռքի ամենահզօր ներուժը ունեցող այս հայահոծ համայնքին, որ թէ՛ քանակի եւ թէ՛ որակի առումով գերակշիռ ներկայություն է հայ իրականության մէջ:

Այնուհետեւ իր բարի գալուստն խօսքերով ելոյթ ունեցաւ ընթացաւարտ շրջ. վարչության ատենապետ Օհան Օհանեանը՝ վեր հանելով Համազգայինի Արեւմտեան Ամերիկայի շրջանի անցեալ երկու տարիների գործունեությունը ամփոփ կերպով, շեշտելով, թէ շրջ. վարչության գերագոյն ջանքը եղել է ներկայ ժամանակների մարտահրաւերներին համապատասխանեցումը եւ միեւնոյն ժամանակ հաւատարիմ մնալ մեր աւելի քան 80ամեայ միութեան առաքելութեանը:

«Իր յարատեւ աշխատանքով, շրջ. վարչությունը ընդլայնեց Համազգայինի գործունեության օղակը, չսահմանափակուեց արանդական դարձած գործելակերպով, այլ ունեցաւ յանդգնությունը նոր նախաձեռնություններ յառաջ բերելու եւ յաջողեցնելու դրանք: Այս աշխատանքի արդիւնքը կը տեսնենք մեր գործունեության մէջ հետզհետէ երիտասարդների ներգրաւումով», յայտարարեց Օհան Օհանեան:

Համազգայինի կեդր. վարչության անդամ դոկտ. Վիգէն Եագուպեան իր խօսքերի մէջ ծանրացաւ Համազգայինի դիմագրաւած մերօրեայ մարտահրաւերների վրայ, շեշտելով, թէ ժամանակը եկել է գտնելու համաթոնը Համազգայինի արանդական հայապահպանման գծով տարուող աշխատանքների եւ մեր ներկայ պայմանների թելադրած հրամայականների միջեւ:

Յայտարարելով, թէ «Համազգայինը պահակն է մեր անցեալի, բայց նաեւ առաջնորդը եւ ստեղծագործը մեր ապագայ»՝ դոկտ. Եագուպեան յոյս յայտնեց, թէ Համազգայինի Արեւմտեան Ամերիկայի շրջանի 17րդ Ընդհանուր ժողովը պիտի գծէ այն ճանապարհը, որ Համազգայինի պիտի դարձնէ այդ կազմակերպությունը: Այնուհետեւ բեմ հրաւիրուեց ՀՅԴ Բիւրոյի անդամ դոկտ. Վիգէն Յովսէփեանը: Ողջունելով ժողովը եւ շնորհաւորելով համազգայնական ընկերներին անցեալ երկամեայի իրենց հաւաքական ձեռքբերումների համար՝ դոկտ. Յովսէփեանը նշեց, թէ «Համազգայինը հայ մտաւորականության շտեմարանն է, եւ նրա համապատասխանեցումը օրուայ ակնկալություններին կը կայանայ նրանում, որ ինքը փորձում է իր նոր հորիզոններով ճամբայ բացել հայ նոր գրողների, մտաւորականների եւ արուեստագէտների համար»:

Սրբազան հայրը իր խօսքերի մէջ գոհունակություն յայտնեց մեկ անգամ եւս Համազգայինի ընտանիքին մէջ գտնուելու առիթով, շեշտելով, թէ Համազգայինը ծնունդն էր մեր ազգային կարիքների, ու անիկա դարձաւ Սփյուռքի մեր ժողովրդի մշակոյթի նախարարությունը, իսկ այսօր նոյնպէս իր բաժինն է բերում վերանկախացած հայրենիքի մշակութային կեանքին, որպէս արթուն պահակը եւ տարածողը մեր մշակոյթին: «Համազգայինը մեր մշակոյթի դրօշակակիրներից մեկն է յատկապէս Հայաստանի սահմաններից դուրս: Նրա հիմնադրութեան պատճառը եւ տասնամեակների գոյութեան իմաստը եղել ու մնում է հայապահպանումը՝ իր ամենալայն իմաստով, ծառայութիւն հայ գրին, արուեստին եւ տարածումը հայութեան արժէքների: Այս իմաստով, Համազգայինը յատուկ մի լծակցություն ունի մեր եկեղեցու հետ, որ դարեր շարունակ, պետական կառոյցներից զրկուած շրջաններում հաւատարմօրէն տարել է նոյն առաքելությունը», յայտարարեց սրբազան հայրը: Վերջում ան յոյս յայտնեց, թէ Համազգայինի շրջ. վարչությունը, Հայ մանուկի տարուան առիթով աշխատանքներ պիտի ձեռնարկի՝ մեր մշակութային արժէքները եւ կատարած սխրագործությունները յատկապէս հայ նոր սերնդին փոխանցելու ուղղութեամբ:

Աւարտին, սրբազան հօր «Պահպան»՝ ջշով եւ սեղանների օրհնությամբ վերջ գտաւ ձեռնարկի պաշտօնական բաժինը եւ տէղի ունեցաւ ընթրիքի մատակարարում: Յաջորդ օրը՝ Մարտի 19ին, առաւօտեան ժամը 10էն սկսեալ բացումը կատարուեց Համազգայինի Արեւմտեան Ամերիկայի շրջանի 17րդ Ընդհանուր ժողովին, որին մասնակցում էին Հովիտի «Պարոյր Մեւակ»,

Փասադինայի «Շահան Շահնուր», Օրենջ Բաունթրիի «Սիամանթո», Գլենդեյլի «Յովհաննէս Թումանեան», Ֆրեզնոյի «Դանիէլ Վարուժան» եւ Սան Ֆրանսիսկոյի «Նիկոլ Աղբալեան» մասնաճիւղերի, ինչպէս նաեւ Աւանդոյններ, Երաժշտական եւ «Ան»ջ պարաօլիմպիկ միաւորների ներկայացուցիչ պատգամաւորները ու մի շարք հրաւիրեալներ:

Մանրակրկիտ քննարկումներով ժողովը ծանրացաւ ընթացաւարտ շրջ. վարչութեան անցեալ երկու տարիների գործունէութեան, յաջողութեամբ իրականացուած ձեռքբերումների, դիմագրաւած դժուարութիւնների, արձանագրուած յաջողութիւնների եւ ձախողութիւնների վրայ, մանաւանդ՝ միութեան շարքերը երիտասարդականացնելու եւ այժմեական պահանջներին համապատասխանեցուելու, միաժամանակ մեր կոչումին հաւատարիմ մնալու եւ Համագգայինը նորօրեայ գործելաձևով օժտելու անհրաժեշտութիւնների վրայ:

Վերջում ընտրուեց Համագգայինի Արեւմտեան Ամերիկայի շրջանային նոր վարչութիւնը՝ բաղկացած հետեւեալ անդամներից. Ռոժէ Խատրեան, Ծովիկ Կէտիկեան, Մարիա Խարճեան, Սօսիկ Յարութիւնեան, Միրնա Տուգճեան, Լիւսի Չուխաճեան, Լորի Թաթուլեան եւ Ծովինար Մելքոնեան:

Ժողովի աւարտին, Համագգայինի կեդր. վարչութեան անդամ դուրս. Վիգէն Եագուպեան յաջողութիւն մաղթեց նորընտիր շրջ. վարչութեան աշխատանքներին՝ յոյս յայտնելով, որ այս կազմը լաւագոյն կերպով պիտի դիմագրաւի դժուարութիւնները եւ յաջորդ հանգրուանին առաջնորդի ու աւելի հզօր կազմակերպութեան վերածի Համագգայինը:

<http://asbarez.com>

Լիբանանում տեղի կունենան միջոցառումներ՝ նվիրված Այնթապի հերոսամարտի 91-ամյակին

2011-04-01

1920 թվականի ապրիլի մեկին ժամանակակից գենքերով զինված թուրքերը հարձակվեցին հայերի վրա և սպանեցին ու վիրավորեցին նրանց առանց տարիքի և սեռի խտրականության: Ընդհանուր ջարդը անխուսափելի էր, եթէ անհրաժեշտ կարգադրությունները նախօրոք եղած չլինէին: Դեպքը սկսած օրն իսկ, թաղերը և փողոցները փակվեցին պատնէշներով, ծրագրի համաձայն: Իրենց հայրերի, ամուսինների և զավակների կողքին՝ հայ կանայք, դեռատի տղաներն ու մատղաշ աղջիկները քար ու ջուր էին կրում պատնէշների շինության աշխատանքի համար: Թուրքերը մեծ ուժերով հարձակվեցին բազմաթիվ անգամներ: Սակայն բախվելով հայ մարտիկների բուռն ընդդիմությանը՝ փախուստի դիմեցին մեծ կորուստներով: Ապրիլի 16-ին կռիվները ստացան նոր բնույթ մինչ այդ կրավորական դիրք որդեգրած ֆրանսիական ուժերի մասնակցությամբ: Գնդապետ Նորմանն իր բանակով մտավ Այնթապ: Այնթապցիների պաշտպանության գիծը մոտավորապէս 5 քառակուսի կիլոմետր էր: Եվ այս ճակատը պաշտպանելու համար ունէին միայն 300 հրացան: Մայիսի 15-25-ը ռազմաճակատի ամբողջ երկայնքով թուլացավ կռիվների թափը: Հունիսի 8-ին ֆրանսիացիները գործադրեցին զինադադարի իրենց հանձնառությունը, բայց հայ կորյունները կառչած մնացին իրենց դիրքերին:

Գնդապետ Ապատին նույն օրը հայտարարեց Ազգային Միությանը, թէ կտրուկ հրահանգ է ստացել Այնթապից հեռանալու և թէ անկարելի է իր համար որևէ ձևով օգնել հայերին, հակառակ իր ցանկության: Հանձնարարված էր համաձայնել թուրքերի հետ խաղաղությամբ ապրել նրանց կողքին՝ որպէս հավատարիմ քաղաքացիներ թուրքական պետությանը: Հայերը ստիպված լքեցին Այնթապը և գաղթեցին այլ երկրներ: Նրանց մեծ մասը հիմնվեց Լիբանանում և հիմնեց Այնթապ գյուղը:



«Ազգ». ԱՄՆ-ում սկսվել է Ցեղասպանության ճանաչման արշավը

2011-04-01

«Ժամանակն է կոնկրետ գործերով իրականացնելու հույսերը»: Սա է 2011 թվի Հայոց ցեղասպանության ցուցատախտակի պատգամը: «Peace of Art» կորպորացիայի հովանավորությամբ պատրաստված ցուցատախտակներն ապրիլի 4-ից կբարձրացվեն Ուոթերթաունի Մաունթ Օբրըն փողոցի այտուների վրա:

Իսկ Ֆոքսբորոյում, «Ժիլետ» մարզադահլիճի մոտակայքում արդէն իսկ տեղադրված ցուցատախտակը կոչ է անում «Ճանաչել Հայոց ցեղասպանությունը»: Պատգամը հղում է 2009

թվին խաղաղության Նոբելյան մրցանակի արժանանալու առթիվ նախագահ Օրամայի խոսքերին, որոնցով նա այդ որոշումը որպես ավելի «գործողության կոչ» ընդունեց, քան իր ձեռքբերումների գնահատանք: «Peace of Art»-ի հիմնադիր և տնօրեն Դանիել Վարուժան-Հաճինյանն էլ այս տարվա ցուցատախտակներով ցանկանում է հիշեցնել նախագահ Օրամային, որ հիմա է ժամանակը «կոնկրետ գործերով իրականացնելու հույսերը»,- գրում է «Ազգ»-ը:



Նվիրված «Հիշողության

2011-03-31

Ըստ ծրագրի՝ բաստիոնի բարձրությամբ 9 «Հիշողության

մտահղացմամբ՝ նրանք չեն լուսավորելու տարածքը, իսկ լուսատուի տեղում ամրացվելու են չժանգոտվող մետաղից «արցունքներ»: Լապտերների վրա կփորագրվեն հայերեն և ֆրանսերեն տեքստեր, իսկ զիջերային լուսավորությունը լինելու նրանց վրա: Այսպիսով լապտերները «կհրավիրեն» զիջերում ճեմողներին իրենց մոտ մտորելու և կարդալու տեքստերը:

ՎԻԳԵՆ ՉԱԼԴՐԱՆԵԱՆ ԳԵՐՄԱՆԻՈՅ ՄԷՋ

2011-03-31



Ժնեի քաստիոնը կլուսավորեն Հայոց ցեղասպանության զոհերին լապտերները»

տարածքում կտեղադրվեն 8 մետր լապտերներ»: Հեղինակի

Այս աշխատանքը ներկայացվել է մարտի 29-ի մամուլի ասուլիս ժամանակ, որի բանախոսներից է եղել նաև աշխարհահռչակ շանտոնյե, Շվեյցարիայում Հայաստանի արտակարգ և լիազոր դեսպան Շառլ Ազնավուրը, ով վերջին տարիներին նաև բնակվում է Շվեյցարիայում:

«Ես շատ գոհ եմ, որ հայկական աշխատանք կներկայացվի նաև իմ բնակավայր Շվեյցարիայում», - ասել է աշխարհահռչակ շանտոնյեն՝ անվանելով նախագիծը՝ հուսադրող և միտված ապագային:

Շվեյցարիայի հայ համայնքը նախագծի իրականացման համար կտրամադրի 400 հազար շվեյցարական ֆրանկ, իսկ ժնեի քաղաքապետարանը 100 հազար: Բաստիոնում «Հիշողության լապտերներ»-ի նախագծային մրցույթում մասնակցել են 8 նկարիչներ, ժյուրին միաձայն հավանություն է տվել Օհանյանի աշխատանքին:

NEWS.am



Սփյուռքում գործող հայկական դպրոցի տնօրեն, որին պետք է ճանաչել

2011-03-31

Աբխազիայի Գագրա քաղաքում հրատարակվող «Գագրսկի վեստնիկ» թերթում տպագրվել էր Աբխազիայի քաղաքացի, Գագրա քաղաքի բնակիչ Գալուստ Փառնակի Տրապիզոնյանի կենսագրությունը, և դա պատահականություն չէր: Փետրվարի 12-ի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների թեկնածուների թվում էր նաև պարոն Տրապիզոնյանը: Շատ գունեղ և տպավորիչ է նրա անցած ճանապարհը: Ծնվել է 1958թ. Գագրա քաղաքում, բարձրագույն

մանկավարժական կրթություն ստացել Վորոշիլովգրադում, ծառայել Սովետական բանակում, այնուհետև դասավանդել հ. 3 միջնակարգ դպրոցում: Մասնակցել Աբխազա-վրացական պատերազմին, ստացել է Աբխազիայի հերոսի կոչում: Երար ժամանակ զբաղեցրել է պետական բարձր պաշտոններ. եղել է Աբխազիայի կրթության նախարարի տեղակալ, այնուհետև կենսաթոշակային ֆոնդի նախագահ: Այդ ընթացքում պարոն Տրապիզոնյանը ավարտել է Աբխազիայի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Եղել է 1996-2007թթ. Աբխազիայի ազգային ժողովի երկու գումարումների դեպուտատ, վերջին գումարման ժամանակ ղեկավարել է Սոցիալական քաղաքացիության կոմիտեն՝ միաժամանակ լինելով Աբխազիայի Կենսաթոշակային հիմնադրամի խորհրդի նախագահ: Չնայած զբաղվածությանը՝ պարոն Տրապիզոնյանը ակտիվորեն մասնակցում է հայ համայնքում կազմակերպվող միջոցառումներին, հայապահպան ծրագրերին: 1994-2004թ.թ. ղեկավարել է «Կռունկ» հայկական մշակութա-բարեգործական ընկերությունը, իսկ 2004-ից եղել է Աբխազիայի հայ համայնքի համանախագահ: 2007-ից առ այսօր «Գագրիպշ» առողջարանային համալիրի նախագահն է, իսկ 2010թ. նաև՝ Գագրայի հ. 3 միջնակարգ դպրոցի տնօրեն:

«Հայերն այսօր»-ում արդեն տպվել է նույն դպրոցի ուսուցչուհի տիկին Ամալյա Կպիկյանի նյութը դպրոցի

մասին, որտեղ մանրամասնորեն նկարագրել է այն ամենը, ինչ արդեն արել է և պետք է անի դպրոցի համար պարոն Տապիգոնյանը:

Պարոն Տրապիգոնյանը 2010 թ. անձամբ է ուղեկցել «Արի Տուն» ծրագրով Հայաստան եկած աշակերտներին, եղել ՀՀ սփյուռքի նախարարությունում, հանդիպել ԱՊՀ վարչության աշխատակիցների հետ:



Էթնիկ հայ Դարոն Աճեմօղլուի նշանակումը Ֆրանսիայում Թուրքիայի դեսպան Էրդողանի PR-քարոզարշավի մի մասն է

2011-03-30

Այդ մասին PanARMENIAN.Net ի թղթակցին է հայտնել թուրքագետ Ռուբեն Մելքոնյանը: Նրա խոսքով, այդ քարոզարշավն ուղղված է Եվրոպայի աչքին Թուրքիայի կերպարի բարելավմանը՝ շուտափույթ կերպով ԵՄ-ին անդամակցելու համար:

«Թուրքիայի Հանրապետության պատմության մեջ սա ընդհանրապես առաջին դեպքն է, երբ հայը որևէ պաշտոնի է նշանակվում: Մինչ օրս նման բան երբեք չէր կարող լինել: Օսմանյան կայսրությունում եղել են դեպքեր. 1912 թվականին Թուրքիայի արտգործնախարարը Նորատունկյանն էր», - ասել է Մելքոնյանը: Հայ թուրքագետն ընդգծել է, որ եթե Էրդողանը ԵՄ-ին անդամակցելու նպատակով նման լայն

քարոզարշավ է ձեռնարկել, ապա կարող է և հասնի իր ուզածին:

Ֆրանսիայում Թուրքիայի նորանշանակ դեսպանը Էթնիկ հայ Դարոն Աճեմօղլուն է: Այդ մասին PanARMENIAN.Net ին հայտնի դարձավ Թուրքիայի ԱԳՆ-ում ունեցած աղբյուրներից: Դարոն Աճեմօղլուն Էկոնոմիկայի պրոֆեսոր է Ստամբուլից, MIT տնտեսության ամբիոնի վարիչը: Նա դեկավարում է նաև մասնագետների մի խումբ, որը տնտեսության ոլորտում իրականացրած հետազոտությունների համար երկու անգամ առաջադրվել է Նոբելյան մրցանակի:



Ամերիկացի կոնգրեսական Ադամ Շիֆի ընտրատարածքում «Տարվա կին» տիտղոսը շնորհվել է Մարո Քեշիշյանին

2011-03-30

«Մարոն անխնջ աշխատում է ի նպաստ հայ համայնքի, ակտիվորեն մասնակցում է բոլոր նախաձեռնություններին և միջոցառումներին», - ասել է Շիֆը:

Մարո Քեշիշյանը ծնվել և մեծացել է Լիբանանում, այնտեղ է կրթություն ստացել, 8 տարի եղել է հայկական դպրոցի տնօրեն: 1984 թվականին նա տեղափոխվել է ԱՄՆ և գլխավորել է Լոս Անջելեսի «Հոմենիումներ»: Մարո Քեշիշյանը շուրջ 20 տարի թղթակցել է Asbarez թերթին՝ գրելով Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի մասին:

Այժմ Մարո Քեշիշյանը Հայ օգնության միության գործադիր քարտուղարն է: Ամեն տարի, «Կանանց ամիսը պատմության մեջ» միջոցառումների ընթացքում կոնգրեսական Շիֆը պարգևատրում է 29-րդ ընտրատարածքի կանանցից մեկին:



Հայազգի Աջեմօղլուն հրաժարվել է Փարիզում Թուրքիայի դեսպանի պաշտոնից՝ պատճառաբանելով գիտական աշխատանքը

2011-03-30

Ինչպես գրում է թուրքական Today's Zaman-ը, այդ նախաձեռնությունը կոչված էր հալեցնելու սառույցը հայ-թուրքական հարաբերություններում: Մասնավորապես, համաշխարհային համբավ ունեցող տնտեսագետ Դարոն Աջեմօղլուն պետք է ներկայացներ

Թուրքիան Տնտեսական համագործակցության ու զարգացման կազմակերպությունում (ՏՀԶԿ):

Բյուրեղում «Թուրքիայի քաղաքականությունը ժամանակակից աշխարհում» փակ խորհրդաժողովում Դավութօղլուն հայտարարել էր, որ Թուրքիան ցանկանում է ոչ միայն շարունակել հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանն ուղղված ջանքերը, այլ նաև պետական պաշտոններում նշանակել

հայագի քաղաքացիների: «Մենք ցանկանում էինք Աջեմօղլուն նշանակել Թուրքիայի ներկայացուցիչը Տնտեսական համագործակցության ու զարգացման կազմակերպությունում (SZՁԿ), սակայն նա չընդունեց առաջարկը, պատճառաբանելով գիտական աշխատանքը»,-մեջբերում է Դավությունի խոսքերը թուրք դիվանագետը:

Նախօրեին աղբյուրը Թուրքիայի ԱԳՆ-ում հայտնել է, որ Աջեմօղլուն պետք է նշանակվի Թուրքիայի դեսպանը Ֆրանսիայում: Դարձն Աջեմօղլուն տնտեսագիտության պրոֆեսոր է Ստամբուլից, MIT տնտեսագիտության ամբիոնի ղեկավարն է: Նա ղեկավարում է նաև մի խումբ մասնագետների, որը երկու անգամ ներկայացվել է Նոբելյան մրցանակի տնտեսագիտության ոլորտում հետազոտությունների համար:



**ԱԽԱՆՑԻՍՏՈՒՄ ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ՎԱՀՐԱՍ
ԳԱՅՖԵՃՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ
ՄԻՈՒԹՅՈՒՆ**

2011-03-29

Մարտի 26-ին Ախալցխայում տեղի ունեցավ նոր կազմավորվող կազմակերպության՝ Վահրամ Գայֆեճյանի անվան ստեղծագործողների միության հիմնադիր ժողովը: Նոր կազմավորվող կազմակերպության հիմնադիր ժողովին ներկա էին հիմնականում Ախալցխայի նկարիչները, մտավորականները և հայկական կազմակերպությունների

ներկայացուցիչները:

Ինչպես Akhaltskha.Net-ին տեղեկացրին կազմակերպության հիմնադիր անդամները, նորաստեղծ կազմակերպությունը հիմնականում զբաղվելու է քաղաքի ու գյուղերի բոլոր ստեղծագործող տաղանդավոր մարդկանց աջակցելով, խրախուսելով ու համախմբելով, որպեսզի մեր քաղաքում շարունակվի և զարգանա ծննդով Ախալցխացի՝ Վարդգես Սուրենյանցի, Վահրամ Գայֆեճյանի և Հակոբ Կոջոյանի նման հանրահայտ նկարիչների գործը:

Ստեղծագործողների միության հիմնադիր ժողովին հետևեց նկարների և այլ ստեղծագործությունների ցուցահանդես:



**2012 թվականին Պերմի երկրամասում կավարտվի Սուրբ
Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու կառուցումը**

2011-03-29

Նրա խոսքերով 2001 թվականից սկսած Պերմի հայկական համայնքը փորձել է Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին կառուցելու համար թույլտվություն եւ հողատարածք ձեռք բերել: Սակայն հողատարածքի հարցը լուծվել է միայն միայն 2007 թվականին: 2008-ին օծվեց եկեղեցու հիմքը, այս պահին եկեղեցու կառուցման աշխատանքները դեռևս ընթացքի մեջ են:

«Եկեղեցու կողքին տարածք է հատկացվել նաև հայկական դպրոցի, մշակութային կենտրոնի եւ թանգարանի համար: Կառուցվում է հանդիսությունների սրահ, որից ստացած հասույթը պատկանելու է եկեղեցուն, որպեսզի ապահովի եկեղեցու ֆինանսական կայունությունը»,-մանրամասնեց Արմեն Գարսյանը:



**Սանկտ Պետերբուրգի հայ համայնքը «Միսս հայկական
մարզաբիտ» մրցույթում կրնտրի ամենագեղեցիկ
հայուհուն**

2011-03-29

Մեկ ամսվա ընթացքում մոդելային գործակալությունների ներկայացուցիչները ռուսական գեղեցկության մրցույթների բազմակի հաղթող Եկատերինա Գուսևայի հետ մշակում են մասնակիցների քայլվածքը: Բացի դրանից, աղջիկները փորձում են տաղանդների

մրցույթին ներակայանալու համար անհատական համարները, հաղորդում է miasin.ru-ն:

Մարտի 26-ին մասնակիցներն անցել են բարդ փորձություն՝ բրեյն-ոֆնգ, որտեղ պահանջվել է ցուցաբերել հարցերին արագ և դիպուկ պատասխանելու կարողություն, որոնք բացառապես հայկական թեմատիկա են ունեցել:

Միջոցառման գլխավոր կազմակերպիչներ Կարինա Տիրաբյանի և Մարինա Սարուխանյանի խոսքերով, մրցույթին պատրաստվելը պետք է օգնի մասնակիցներին մեկ թիմ գալ իրենց, իսկ նրանց յուրաքանչյուրի համար գլխավոր նվերը լինելու է հեռավոր հայրենիքի մշակույթի հետ մերձեցումը:

Մրցույթի գալա-համերգը տեղի է ունենալու 2011-ի ապրիլի 10-ին «Ամրոց» ռեստորանի համերգասրահում:



Պիեռ Ֆատտուշը միաձայն ընտրվել է Լիբանան-Հայաստան բարեկամական ասոցիացիայի նախագահ

2011-03-28

Լիբանանում Հայաստանի դեսպան Աշոտ Քոչարյանը շնորհավորել է ներկաներին պաշտոնական գրանցման հետ կապված բոլոր ընթացակարգային գործընթացներն ավարտելու կապակցությամբ: Նա համոզմունք է հայտնել, որ նորաստեղծ ասոցիացիան իր անդամների մեծ ներուժի և ակտիվ գործունեության շնորհիվ ավելի կխորացնի և կընդլայնի հայ-լիբանանյան երկկողմ բարեկամական

հարաբերությունները տարբեր փոխազդեցություններում, հայտնում է ՀՀ ԱԳՆ մամուլ ծառայությունը:

Լիբանան-Հայաստան բարեկամական ասոցիացիայի նախագահ միաձայն ընտրվել է հայտնի գործարար, հայ ժողովրդի մեծ բարեկամ Պիեռ Ֆատտուշը: Ընտրվել են նաև ասոցիացիայի տնօրենների խորհրդի անդամները: Լիբանանում Հայաստանի դեսպանին առաջակվել է ասոցիացիայի պատվավոր նախագահի պաշտոնը:

Քննարկվել և ուրվագծվել են նաև ասոցիացիայի հետագա գործունեության առանցքային ուղղությունները: Ստեղծվել է աշխատանքային խումբ, մայիսի սկզբին կազմակերպվելիք պաշտոնական միջոցառմանն առնչվող աշխատանքները համակարգելու նպատակով:

Ասոցիացիայի գլխավոր նպատակն է զարգացնել և ընդլայնել Լիբանանի և Հայաստանի երկկողմ հարաբերությունները, մասնավորապես առևտրատնտեսական, մշակութային, կրթական, առողջապահական, զբոսաշրջության և այլ ոլորտներում, ինչպես նաև բացահայտել նոր հնարավորություններ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ներդրումային ծրագրերի իրականացումը խրախուսելու նպատակով:

Պիեռ Ֆատտուշը միաձայն ընտրվել է Լիբանան-Հայաստան բարեկամական ասոցիացիայի նախագահ



Մինգապուրի հայ համայնքը մեծ շուրջով նշել է երկրի ամենահին քրիստոնեական եկեղեցու 175-ամյակը

2011-03-28

Մբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին գտնվում է Մինգապուրի Հիլ փողոցում. այն ամենահին քրիստոնեական եկեղեցին է և ազգային հուշարձան է դարձել 1973 թ.:

Այդ օրվա առթիվ եկեղեցու հոգաբարձուները շարաթ գալա ընթրիք էին կազմակերպել «Ռաֆլզ» հյուրանոցում, որը 1887 թ. կառուցել են հայազգի եղբայրներ Տիգրան և Ավետիք Սարգիսները: Հատուկ այս տոնակատարության համար Մինգապուր ժամանած արքեպիսկոպոսը պատարագ է մատուցել Մբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու կիրակի օրը:

Մինգապուրի արտաքին գործերի նախարար Ջորջ Յեռն, որը ևս պատարագի մասնակիցների թվում էր, հարցազրույց է տվել The Straits Times թերթին, որում նշել է, որ հայկական եկեղեցին և համայնքը Մինգապուրի ժառանգության կարևոր մասն են:

Մինգապուրում ապրում է շուրջ 80 հայ: Փոքրաթիվ համայնքը վերջին հինգ տարում կրկնապատկվել է՝ հիմնականում Հայաստանից տեղափոխվածների հաշվին: Վերջին երկու տարիների ընթացքում Մինգապուրում 10 հայ երեխա է ծնվել:

Դրավիճակը Դամասկոսում հանգիստ է, սիրիահայ համայնքում հավաստիացնում են, որ իրենց ոչինչ չի սպառնում

2011-03-28

«Դամասկոսում անկարգություններ չկան, դասերը դպրոցներում ու համալսարաններում ընթանում են սովորականի պես: Ես այժմ պատրաստվում եմ դասախոսության գնալ համալսարան», -ասել է նա:

Ըստ Արիսյանի, համայնքից ոչ ոք մտադիր չէ լքել Սիրիան: «Մենք գիտենք, որ շուտով բարեփոխումներ կիրականացվեն պետական կառավարման համակարգում և այն ժամանակ իրավիճակն առավել հանգիստ կդառնա: Հայերի համար տվյալ դեպքում ոչինչ չի փոխվի՝ մենք հանգիստ ապրում ենք և սատարում ենք նախագահ Բաշար ալ-Ասադին», -ասել է Արիսյանը:

Սիրիայում հայերն ունեն դպրոց, գործող եկեղեցիներ, գործող կազմակերպություններ: Այդ արտոնությունները տարածվում են միայն հայ փոքրամասնության վրա, մյուս ազգային փոքրամասնությունները նման արտոնություններ չունեն: Սիրիայում հայերի քանակը հասնում է 100 հազարի:



Հայկական Բարեկենդանը՝ Դանիայի հայ համայնքում

2011-03-28

Միջոցառման ընթացքում կազմակերպվել են տարբեր զվարճալի և հետաքրքիր խաղեր, որից հետո երեխաները պետք է օգտվեին առաստաղից կախված տակառի քաղցրավենիքներից: Դա ևս հետաքրքիր մի խաղ էր. այն երեխան, ով կկարողանար ամբողջությամբ կոտրել տակառը, կստանար նվեր և թագավորական թագը:

Միջոցառմանը, որին ներկա էին նաև հյուրեր Անգլիայից, մասնակցել են ավելի քան 45 մարդ՝ ազգությամբ հայ և դանիացի:

Ներկա գտնվող հյուրերն հայտնել են իրենց գոհունակությունն ու խորին շնորհակալությունը այդ գեղեցիկ միջոցառման հայեցի կազմակերպման և անցկացման համար:

Հասարակություն



Վերջին երեք տարում Արցախն է տեղափոխվել 440 ընտանիք, որոնցից 130-ը՝ միայն անցյալ տարի

2011-03-31

Ողջունելով նիստին ներկա պաշտոնատար անձանց և սոցապահովության ոլորտի պատասխանատուներին՝ կառավարության ղեկավարը ճիշտ և դրական համարեց առաջին անգամ կիրառվող նման ձևաչափով տարվա կատարվածի ամփոփումը:

ԼՂՀ սոցապահովության նախարար Նարինե Ասծատրյանը ըստ ոլորտների ներկայացրեց հաշվետու տարում կատարված աշխատանքները: Նշվել է, որ ժողովրդագրական ոլորտում իրականացված ծրագրերի արդյունքում արձանագրվել են դրական մի շարք ցուցանիշներ: Միգրացիոն քաղաքականության հիմնական նպատակը մարդկանց ներհոսքի խթանումն է:

Սոցապահարարը շեշտել է, որ միայն պետական բյուջեի միջոցները բավարար չեն այս ոլորտի խնդիրների լուծման համար: Այնուամենայնիվ, աշխատանքներ իրականացվում են, ինչի արդյունքում վերջին երեք տարվա ընթացքում հանրապետություն է տեղափոխվել ավելի քան 440 ընտանիք, որից 130-ը՝ միայն անցած տարի: Վարչապետը անդրադարձավ, որ վերջին տարիներին վերաբնակեցման ոլորտում արված փոփոխությունները արձանագրում են թեկուզև դանդաղ, սակայն դրական տեղաշարժեր: Օրինակ, անցած 7 ամիսներին միայն Քաշաթաղի շրջանում վերաբնակվել է մոտ 300 ընտանիք: Նշվեց, որ շարունակվելու են հայրենադարձության ծրագրերը:



Մտամբույի դատարանը մերժել է Դինքի ընտանիքի փաստաբանների՝ Օգյուն Մամաստի հորը նիստին կանչելու պահանջը

2011-03-31

Ինչպես հիշեցնում է թուրքական Today's Zaman-ը, անմիջապես սպանությունից հետո Օգյունի հայրը՝ Ահմեդ Մամաստը ոստիկանի այն հարցին, թե որտեղ է նրա որդին, պատասխանել է, որ այդ մասին ավելի լավ կհիմանա Տրաբզոնի ոստիկանության պետը:

Փաստաբան Ֆեթիե Չեթինի պահանջով, Դինքի սպանության մասին և սպանված անձի մասին տեղեկությունները Տրաբզոնի դատախազություն է ներկայացրել ոստիկանության նախկին պետ Էմին Արսլանը և ոստիկանության գլխավոր տեսուչ Լեվենթ Յարիմելը:



Վրաստանի հայկական դայրոցներում կվերականգնվի հայոց լեզի դասաժամերի նախկին ծավալը

2011-03-30

Ըստ նրա, եթե 2010թ. հայոց լեզվի դասաժամերի քանակը շաբաթական 5 ժամ էր, ապա այսուհետ կվերականգնվի դասաժամերի նախկին ծավալը՝ 7-8 ժամ: «Ես դա համարում եմ մեծ նվաճում և շնորհակալ եմ իմ վրաց գործընկերոջը այս հարցին արագ արձագանքելու համար», -ասել է Աշոտյանը:

Բացի այդ, Աշոտյանը հայտնել է նաև, որ պայմանավորվածություն է ձեռք բերվել այն մասին, որ հայկական դասագրքերը հրատարակվելուց առաջ կուղարկվեն հայ մասնագետներին՝ խմբագրման ու թարգմանության անճշտությունների շտկման համար:

ՀԲԸՄ Հայկական վիրտուալ համալսարանը հայտարարում է 2011թ.-ի գարնանային ուսումնական շրջանի գրանցման ժամանակաշրջանը

2011-03-30

ՀԲԸՄ Հայկական վիրտուալ համալսարանը (ՀՎՀ) ուրախությամբ տեղեկացնում է, որ մեկնարկել է 2011թ.-ի գարնանային ուսումնական շրջանի գրանցման ժամանակաշրջանը: Ներքոնշյալ դասընթացները ներկայացվում են բազմաթիվ լեզուներով (ներառյալ՝ արևելահայերեն, արևմտահայերեն, անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն և իսպաներեն) և տարբեր մակարդակներով.

- * արևելահայերեն,
- * արևմտահայերեն,
- * հայոց պատմություն,
- * հայկական ճարտարապետության ներածություն,
- * հայ երաժշտության ներածություն:

Դասերը կսկսվեն ապրիլի 11-ին և կավարտվեն հունիսի 14-ին: Գրանցվելու համար այցելեք ՀՎՀ-ի կայքը www.avc-agbu.org, ստեղծեք Ձեր մուտքանունը (log-in) և լրացրեք գրանցման հայտը:

Ձեր իսկ երկրում լինելով հայերեն մշակույթի և կրթության անմիջական ներկայացուցիչը՝ մենք շնորհակալ կլինենք, եթե այս տեղեկատվությունը տարածեք Ձեր մտերիմների շրջանում:

Հավելյալ տեղեկությունների համար դիմեք մեզ հետևյալ էլեկտրոնային հասցեով. enrollment@avc-agbu.org:

Հայկական վիրտուալ համալսարանը (ՀՎՀ) Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) նորագույն կրթական հաստատությունն է: ՀՎՀ-ն օգնում է իր ուսանողներին օնլայն կրթության միջոցով ձեռք բերել հայկական կրթության հիմնարար գիտելիքներ:

ՀՎՀ-ն տրամադրում է հայկական կրթություն ցանկացած վայրում, ցանկացած պահի:



Արցախյան ազատամարտի հերոս Դմիտրի Սոտրիչը ՀՀ նախագահի անունից հետմահու պարգևատրվել է «Արիության» մեդալով

2011-03-29

Ինչպես PanARMENIAN.Net ին հաղորդեցին Ռուսաստանում Հայաստանի դեսպանատնից, հանձնման արարողությունից առաջ դեսպանը ներկայացրեց դարաբաղյան հիմնախնդրի ծագման նախապատմությունն ու խոսեց 90-ականներին ազգային

ազատագրական շարժման վերսկսման շարժառիթների մասին:

Հանձնելով մեդալը՝ դեսպան Օլեգ Եսայանը ողջ հայ ժողովրդի խորին շնորհակալությունը հայտնեց ռուս

կամավորի մորը՝ վստահեցնելով, որ Արցախն ու հայ ժողովուրդը չեն մոռացել նրա որդու սխրագործությունը: Իր խոսքում Օլեգ Եսայանն ասաց. «Ես ծնունդով Արցախի Մարտունու շրջանից եմ և այս մեղալի հանձնումը, որի մեջ յուրաքանչյուր հայի երախտագիտության մասնիկն է, ինձ համար մեծ կարևորություն ունի: Շնորհիվ Դիմա Մոտրիչի հերոսական քայլերի թշնամու հարձակումը ԼՂՀ Մարտունու շրջանի ուղղությամբ կանգնեցվեց: Դիման և իր ընկեր-կամավորները հայ ժողովրդի հետ միասին հավատացին ընտրած ճանապարհի ճշմարտացիությանը և իրենց սխրագործություններով ձեռք բերեցին անմահություն մեր սրտերում և վերածնված Արցախի պատմության էջերում: Նրանց համար այս պատերազմը պատվի և գաղափարի համար պայքար էր»: Ռուս կամավոր Դմիտրի Մոտրիչը Վլադիվոստոկ քաղաքից 90-ականներին սրտի կանչով թողեց հայրենի տունն ու մեկնեց Ղարաբաղ, որպեսզի օգնի հայ ժողովրդին և նրա հետ միասին պայքարի հանուն հայերի անկախության: Առաջին իսկ մարտից մինչև ողբերգական մահը Դմիտրին դարձավ հայ և ռուս ժողովուրդների միջև փոխօգնության խորհրդանիշ:

Օլեգ Եսայանը նշեց նաև, որ «Արիության» համար մեղալով պարգևատրվում են հայրենիքի պաշտպանության ժամանակ անձնական խիզախության համար, և Հայաստանն ու ազատագրված Արցախը Դիմտրի Մոտրիչի և նրա ընտանիքի համար այլևս երկրորդ հայրենիք են:

Միջոցառումը շարունակվեց Դմիտրի Մոտրիչին նվիրված ռեժիսոր Ա.Թովմասյանի «Կամավորը» ֆիլմի ցուցադրությամբ:



Օրհան Փամուքը Հայոց ցեղասպանության մասին իր խոսքերի համար պետք է վճարի 4000 դոլար

2011-03-28

«Թուրքերը սպանել են 20 հազար քրդի և 1 միլիոն հայի», - ասել է Փամուքը 2005-ին շվեյցարական թերթին տված հարցազրույցում: Դատական գործընթացի համաձայն, գրողը 15 օր ունի բողոքարկման համար, գրում է թուրքական Milliyet թերթը: Իրավական հարցերով փորձագետ Էրասմ Ծենը նշել է, որ դատարանը երկարացրել է բողոքարկման իրավունքը մինչև մեկ տարի: «Սակայն այդ որոշումը նախադեպ է նման դեպքերի համար», - ասել է նա:

Մեղադրանքի հեղինակները եղել են 5 հոգի՝ ներառյալ փաստաբան Քեմալ Քերինչսիզը, որը ներկա պահին ձերբակալված է «Էրզենեքոնի» գործով: Մեղադրողները խոսում են, որ նրանք զինվորների հետնորդներ են, որոնք սպանություններ են գործել և կարծում են, որ Փամուքը վիրավորել է թուրքերի ազգային արժանապատվությունը: Շիշլիի դատարանը 2005-ին չեղյալ է համարել մեղադրանքները, սակայն հետո գործը հանձնվել է լրացուցիչ քննության: 2009-ին դատարանը որոշել է, որ մեղադրողներն իրավացի են:

Մշակույթ



Նիդերլանդներում տեղի կունենա Ցեղասպանության 96-ամյակին նվիրված ոգեկոչման համերգ

2011-04-03

Ելույթ կունենան տարբեր հայ երաժիշտներ, որոնք կկատարեն Կոմիտասի, Բաբաջանյանի, Բախի և այլոց ստեղծագործությունները:



Հրաչ Թիթիզյանը Բրոդվեյում խաղում է Ուդեյ Հուսեինի ուրվականի դերը, Ռոբին Ուիլյամսին

դերասան է և հիանալի մարդ, ես դա իսկապես այդպես է», - ասել է

որը հայտնվում է զինվորին՝

2011-04-03

«Ռոբին Ուիլյամսը հանճարեղ հենց այնպես չեմ ասում, դա Թիթիզյանը:

Ներկայացումը հիմնված է իրական դեպքերի վրա: 2003-ին Իրաքյան պատերազմի առաջին օրերին Բաղդադի կենդանաբանական այգուց փախել է վագր, որն ավելի ուշ սպանվել է երկու ամերիկյան զինվորների կողմից: Դրանից հետո զինվորների և նրանց թարգմանչի կյանքը փոխվել է, քանի որ նրանց սկսել է հետապնդել Մադամ Հուսեինի ավագ որդու՝ Ուդեյ Հուսեինի ուրվականը: «Այս ներկայացումը հստակ պլուս է չունի, այն ներկայացում է կյանքի, էքզիստենցիալիզմի, կրոնի, փիլիսոփայության և ժլատության մասին: Բեմականացումը շատ հարցեր է տալիս և ստիպում հանդիսատեսին մտածել: Նման բան հանդիսատեսը դեռ

չի տեսել»,- պատմում է Թիթիզյանը, որը ներկայացման մեջ կատարում է Ուդեյ Հուսեինի ուրվականի դերը, գրում է Asbarez-ը:



PBS-ի եթերում Ֆլորիդայում ցուցադրվելու է «Հայոց ցեղասպանություն» փաստագրական ֆիլմը

2011-04-02

«Հայոց ցեղասպանություն» փաստագրական ֆիլմի ցուցադրությունն ու դրան հաջորդող բանավեճը տեղի կունենա Ֆլորիդայում «Պատերազմի մեծ հանցագործությունները. Հայոց ցեղասպանությունը Առաջին աշխարհամարտի տարիներին» ծրագրի շրջանակներում: Ապրիլի 27-ին նույն վայրում տեղի կունենա 1,5 մլն հայերի ոչնչացման մասին պատմող ցուցահանդեսի բացումը: «Հայոց ցեղասպանության մասին իրազեկման

մեկամյակի» շրջանակներում միջոցառումներն անցնում են Հոլոքոսթի կենտրոնի հովանու ներքո: Կենտրոնի ծրագրում են նաև ցեղասպանությունների ուսումնասիրությունը Բոսնիայում, Ռոսանդայում և Դարֆուրում, ինչպես նաև դրանց կանխարգելման միջոցները:

«Հայոց ցեղասպանություն» ցուցահանդեսը կփակվի ցուցահանդեսի առաջատար պատմաբան ու համակարգող Մերի Ջոնսոնի հատուկ դասախոսությամբ: Դասախոսությունից հետո, ապրիլի 25-ին Բոկա Ռատոնեի Սբ Դավիթի եկեղեցում և Կուպեր-սիթիի Սբ Աստվածածնի եկեղեցում տեղի կունենա 1,5 մլն զոհերի հիշատակին նվիրված հոգեհանգստի արարողությունը:



Կայքի տառատեսակի ճիշտ արտաբերման համար օգտագործեք Arian AMU.ttf Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված համերգին կմասնակցեն պապ և թոռ Գասպարյանները 01.04.11 21:42 Ապրիլի 29-ին Մոսկվայում Կրեմլի


2011-04-02

Համերգի մասնակիցներն իրենց ելույթը նվիրում են Օսմանյան կայսրությունում 1915-1923թթ. Հայոց ցեղասպանության 96-ամյա տարելիցին:

Կրտսեր դուդուկահարը նշեց, որ իրենք հանդես է գալու ՌԴ նախագահական նվագախմբի և Մոսկվայի Սրբտեոնյան վանքի երգչախմբի հետ:

Համերգի «Կրեմլի երեք լեգենդներ» ծրագիրը կազմված է լինելու հայկական և ռուսական ժողովրդական երգերից, Արամ Խաչատրյանի և Թոմասո Ալբինոնիի դասական ստեղծագործություններից:

«Համերգին հնչելու են նաև Deep purple խմբի ստեղծագործությունները, երաժշտություն «Գլադիատոր», «Գիշերային պարեկ», «Քրիստոսի չարչարանքները» ֆիլմերից»,- նշեց վարպետը:



Լայգա Մինելին, Էլթոն Ջոնը, Սելին Դիոնը իրենց ներկայությամբ կատարեն Ազնավուրին նվիրված միջոցառումը

2011-04-01

Հանդիսավոր երեկոն կվարեն հայտնի երգչուհի ու դերասանուհի Լայգա Մինելին և դերասան Էրիկ Պոդոյանը: Երեկոյի պատվավոր հյուրերը կլինեն Էլթոն Ջոնը, Սելին Դիոնը, Ատոմ Էգոյանը, ինչպես նաև ԱՄՆ-ում Հայաստանի ու Ֆրանսիայի դեսպաններն ու այդ երկրների

ներկայացուցիչները ՄԱԿ-ում:

Հանդիսավոր միջոցառման հասույթը կուղղվի Հայաստանի միայնակ տարեցներին, այդ թվում նաև Վանաձորի տարեցների տանը, որի հիմնադիրն է Ազնավուրը:

Այս տարի լրանում է Շառլ Ազնավուրի Pour L'Armenie հիմնադրամի ու Հայ օգնության ֆոնդի համագործակցության 10 տարին: «Հիմնադրամն ու Ազնավուրը մեկ առաքելություն ունեն` օգնել Հայաստանին դառնալ բարգավաճ, ժողովրդավարական երկիր»,-ասել է ՀՕՖ-ի գործադիր տնօրեն Գառնիկ Նանագուլյանը, գրում է Mirror-Spectator թերթը:



Արթուր Աբրահամը Boom-Boom երգի տեսահոլովակի գլխավոր հերոսն է, որը Էմմինի կատարմամբ կենչի Եվրատեսիլում

2011-03-29

Այդ մասին Երևանում կայացած մամուլ ասուլիսում հայտարարել է ինքը Էմմին: Նա հրաժարվել է բացահայտել կլիպի պլոտեի մանրամասները՝ նշելով, որ կլիպը նկարահանվում է Հայաստանում ու Գերմանիայում և ավարտին կհասցվի մեկ շաբաթում:

Էմմին հայտնել է նաև, որ առաջիկա օրերին նա կսկսի իր պրոմո-տուրը եվրոպական երկրներով, իսկ իր ելույթը Եվրատեսիլում նվիրում է իր հոր՝ քանդակագործ Դավիթ Բեջանյանի հիշատակին, որը վախճանվեց փետրվարին:

Boom-Boom երգը (երաժշտությունը՝ Apricota խումբ, խոսք՝ Սոսի Խանիկյանի, գործիքավորումը՝ Արա Թորոսյանի), որով Էմմին հանդես կգա Եվրատեսիլում, ընտրվեց մարտի 5-ին Հայաստանի Հանրային հեռուստատեսության եթերում SMS-քվեարկության և Ժյուրիի որոշման միջոցով՝ 50/50 հարաբերակցությամբ: Էմմին հանդես կգա մայիսի 10-ին 4 համարի տակ:

Ընդհանուր առմամբ «Եվրատեսիլ-2011» մրցույթին Դյուսելդորֆում կմասնակցեն 43 երկրների ներկայացուցիչներ: Եվրատեսիլի մասնակից երկրները արդեն անց են կացրել ազգային ընտրությունները և որոշել են իրենց մասնակիցների անունները: Եվրոպայի հեռարձակողների միությունը արդեն ստացել է Եվրատեսիլի մասնակիցների բոլոր երգերը: 2010թ. Եվրատեսիլին մասնակցեց 39 երկիր:

Ռուս ընթերցողի դատին կներկայացվի «Գրիգոր Նարեկացին և Միջնադարի հոգևոր մշակույթը» գիրքը

2011-03-29

Դա ռուսերենով առաջին աշխատանքն է՝ նվիրված Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմի 1000-ամյակին: Գրքում ներկայացված են ռուս և հայ հետազոտողների, ինչպես նաև ԱՄՆ, Բուլղարիայի, Ֆրանսիայի գիտնականների աշխատանքները: Գրքում ներառված է Նարեկացու պոեմը:

Հրատարակությունը պատրաստվել է ՌԳԱ Ա. Մ. Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտի և ՀՀ ԳԱԱ Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտի կողմից:

Գիրքը կազմված է Ռուսաստանի, Հայաստանի, Ֆրանսիայի, Բուլղարիայի, ԱՄՆ-ի առաջատար գիտնականների 28 հոդվածներից, որոնց թվում են՝ Մատենադարանի տնօրեն Գ. Թամրազյանը, Ա. Եղիազարյանը, Ա. Բասահկյանը, միջնադարի գծով խոշոր մասնագետներ Կ. Տեր-Դավթյանը, Լ. Սազոնովան, առաջատար նարեկացիագետ, ֆրանսերեն լեզվի թարգմանության հեղինակ Ժան Պիեր Մայեն, Փիթեր Քոուլին (ԱՄՆ) և այլն, գիտությունների դոկտորներ, արվեստաբաններ, պատմաբաններ, երաժշտագետներ: Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմը արժեք է, որով հայ ժողովուրդը մտնում է համաշխարհային մշակույթի մեջ: Նրա անունը դասվում է Դանթեի, Շեքսպիրի, Սերվանտեսի անունների շարքին:



Ռեքասան Օնիկ Կեցոյանը մասնակցում է Աթենքի գլխավոր ներկայացումներից մեկում

2011-03-28

«Միներգիո» թատերասրահում ապաստանյալների և գաղթականների մերօրյա կյանքը բեմադրել է հույն ռեժիսոր Խրիստոս Ստրեպկոսը:

«Խայտաբղետ թութակ» Պիեռ ներկայացնում է երեք գաղթականների առօրյան, ովքեր էժան աշխատավարձի, ռասիզմի ու խտրականության, հանցագործության և գետոյական կյանքի ամենօրյա գոյապայքարի մեջ

են:

Երեք գաղթականներին միացնողը մի խանութում վաճառվող «Խայտաբղետ թութակ»-ն է, որի տերն էլ, պատահաբար, տեղացի մի հայ կին է՝ Մելինան:

Թատերական ներկայացումը շարունակվելու է մինչև Զատիկի տոները:

Սպորտ



Ռոման Ամոյանը Եվրոպայի հունա-հռոմեական ըմբշամարտի չեմպիոն է դարձել

2011-04-03

Նրանք չորս քաշային կարգերից երեքում մեդալներ նվաճեցին: Հերթական անգամ իր հնարավորություններն ապացուցեց Պեկինի Օլիմպիական խաղերի բրոնզե մեդալակիր, Աշխարհի առաջնության արծաթե մեդալակիր և Եվրոպայի չեմպիոն Ռոման Ամոյանը: Հայ ըմբիշը Եվրոպայի չեմպիոն դարձավ մինչև 55կգ քաշային կարգում՝ վստահ

հաղթանակ տանելով իր բոլոր մրցակիցների նկատմամբ: Ամոյանը բոլոր մենամարտերում չոր հաշվով հաղթանակեց: Եզրափակչում նա, չնայած գլխի վնասվածքին երկու շրջաններում 1:0 և 4:0 հաշվով պարտության մատնեց ադրբեջանցի մարզիկ Վուգար Ռազիմովին, որը ներկայացնում էր Ուկրաինան:

84կգ քաշային կարգում բրոնզե մեդալակիր դարձավ Արթուր Շահինյանը: Նա երրորդ տեղի համար պայքարում 3:1 և 2:0 հաշվով պարտության մատնեց գերմանացի Յան Ֆիշերին: Եվրոպայի առաջնության բրոնզե մեդալ նվաճեց նաև Պեկինի Օլիմպիական խաղերի բրոնզե մեդալակիր, Աշխարհի առաջնության արծաթե մեդալակիր և Եվրոպայի բազմակի չեմպիոն Յուրի Պատրիկենը 120կգ քաշային կարգում: Նա առավելության հասավ Յոխան Էուրենի նկատմամբ (Շվեդիա):

Սպրիլի 3-ին ելույթ կունենան երեք քաշային կարգերի ըմբիշներ:



Մարտի 25-ին Սյունիք մեկնեց Սփյուռքահայ Ուսանողների Խորհրդի վոլեյբոլի ջոկատը

2011-03-31

Մարտի 25-ին Սյունիք մեկնեց Սփյուռքահայ Ուսանողների Խորհրդի վոլեյբոլի ջոկատը: Այն մասնակցեց Դավիթբեկյան Ուլիսե ՀԿ-ի կեղմից կազմակերպված վոլեյբոլի մրցաշարին: Այս մասին պատմում է Սփյուռքահայ ուսանողների խորհրդի անդամ Արետ Բոզթաշը: «6 ժամ ճանապարհից հետո հասանք Սյունիք: Ճաշելուց հետո գնացինք մարզադահլիճ, որտեղ և տեղի ունեցավ մրցաշարի բացում: Մեր խումբը հաղթեց առաջին խաղը», - նշում է Արետը:

Երկրորդ օրը շարունակվեցին հանդիպումները, որոնցից հետո խումբը մեկնել է Վահանավանք և Հալիձոր: Էքսկուրսիային հաջորդած մեծ խարույկի մոտ հավաքի ժամանակ բոլոր մասնակիցները ծանոթացել են, և ջերմ ընկերական կապեր են հաստատվել:

«Ամեն ինչ մեզ համար տպավորիչ էր, ոգևորիչ, եւ անմոռաց շատ պատմություններ գրանցվեցին մեր կազմակերպության էջերին», - նշում է Արետը:

Հայտարարություններ

ՀՐԱՎԻՐՈՒՄ ԵՆՔ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ «ՎԵՐԱԾՆՈՒՆ» ԵՐԱԺԻՇՏ-ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՑԹ-ՓԱՌԱՏՈՆԻՆ

2011-04-02

Բոլոր նրանք, ովքեր ցանկություն կունենան մասնակցելու «Վերածնունդ» փառատոնին, կարող են համապատասխան մասնագիտությամբ հայտ ուղարկել մինչև ապրիլի 10-ը՝ հետևյալ էլեկտրոնային հասցեներով՝ karine→_avd@mail.ru, vahagn.hov@mail.ru:

Մանրամասներին և հայտաձևերին ծանոթանալու համար կարող եք այցելել www.gyumriconservatory.com կայքէջը:

ՀՀ սփյուռքի նախարարության աշխատակազմի համահայկական ծրագրերի վարչություն